Արձանագրություն N 2

«ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/4» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան, Վրացյան 73, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ	08.09.2016թ. ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արտակ Պողոսյանը, հանձնաժողովի անդամներ՝ Արմեն Կուլախսզյանը, Հասմիկ Իփեքչյանը և քարտուղար Լիլիթ Գևորգյանը:

«ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/4» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Հանձնաժողովի նախագահ Ա. Պողոսյանը 08.09.2016թ. ժամը 11:00 «ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/4» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝

Չափաբաժնի N	Գնման առարկայի անվանումը	Գինը (ՀՀ դրամ)
1	2016թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 2-ը Աղվերանում արտագնա սեմինարի կազմակերպման ծառայության	6552000 (վեց միլիոն հինգ հարյուր հիսուներկու հազար)

2. Գնումները համակարգող Լ. Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել մեկ մասնակից և հանձնաժողովի նախագահ Ա.Պողոսյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

ա / «Հոթել Աղվերան» ՓԲԸ – Կոտայքի մարզ, գ. Արզական, Անտառային 1, հեռ. 091 22 40 54, էլ. փոստ՝ info@aghveranhotel.am:

3. Ուսումնասիրելով հայտը, դրանում գտնվող փաստաթղթերը և լրացնելով գնահատման թերթիկները (կցվում են)՝ հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

- **«Հոթել Աղվերան» ՓԲԸ-ի ներկայացրած՝**

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան, - ***բավարարում է***

բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան - ***բավարարում է***

գ/ գնային առաջարկը կազմված և ներկայացված է սահմանված պահանջներին համապատասխան - ***բավարարում է***

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0:

4. Ներկայացվեց մասնակցի առաջարկած գինը.

ա/ «Հոթել Աղվերան» ՓԲԸ՝ 6495000 (վեց միլիոն չորս հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ:

Գինն առանց ԱԱՀ՝ 5412500 (հինգ միլիոն չորս հարյուր տասներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

5. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց.
Առաջին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **«Հոթել Աղվերան» ՓԲԸ-ին:**
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

6. Հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև «ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/4» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

7. Հանձնաժողովը որոշեց հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 14.09.2016թ. ժամը 18:00 ներառյալ) ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ԿՏԱԿ-ՊԸԾՁԲ-16/4 հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

8. Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել 2016թ. սեպտեմբերի 16-ին ժամը՝ 11:00-ին:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0:

Հանձնաժողովը նախագահող՝ Ա. Պողոսյան

անդամներ՝ Ա. Կուլախսզյան

Հ. Իփեքչյան

քարտուղար՝ Լ. Գևորգյան